338.1:4
Գ-68

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1932

20.03.2013

Պ ետրատի տպարան
Գլավլիտ 6995 (բ)
Պատվեր 1317
Տիրաժ 6000

338.14
Գ-68
105 JAN 2014

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կոլտնտկենտրոնը ընդունած, ԽՍՀՄ Հողժողկոմատի հավանություն ստացած և ԽՍՀՄ Ժողկոմխորհից ու Կենտգործկոմի նախագահության կողմից հաստատված վերջնական տեքստը։

1007
30196

1. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. . . . . հանրապետության . . . . . շրջանի . . . . գյուղի բատրակները, չքավորներն ու միջակները կամավոր կերպով կազմակերպվում են գյուղատնտեսական արտելի մեջ, վորպեսզի արտադրական ընդհանուր միջոցներով և ընդհանուր կազմակերպված աշխատանքով կառուցեն խոշոր կոլեկտիվ տնտեսություն և այդպիսով ապահովեն իսկական վերջնական հաղթանակը կուլակի, բոլոր չահագործողների հանդեպ, իսկական կատարյալ հաղթանակը կարիքի, մթության և անհատական տնտեսության հետամնացության դեմ և ստեղծեն աշխատանքի բարձր արտադրողականություն և կոլեկտիվ տնտեսության բարգավաճություն։

ՀՍԽՀ — ՍՍՀՄ
Հայ. Ա. Մասիսյանի
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2. ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

2. Արտելի անդամների հողամասերն իրարից անջատող բոլոր միջնակները վոչնչացվում և դաշտի բոլոր հողամասերը միացվում են մի ընդհանուր հողամասի մեջ, վորը գտնվում է արտելի կոլեկտիվ ոգտագործման տակ:

Բոլոր հողամասերն ամբողջովին համայնացնելիս անհատական ոգտագործման համար թողնվում են տներին մոտ գտնվող հողամասերը (պարտեզները, այգիները և այլն): Այնտեղ, ուր անհրաժեշտ է, արտելի վարչության վորոշմամբ և ընդհանուր ժողովի հաստատմամբ փոփոխվում են տներին մոտ գտնվող հողամասերի չափերը:

3. Արտելի միասնական հողամասը վոչ մի դեպքում չի կարող փոքրացվել: Արտելից դուրս յեկած անդամներին արտելի հողամասի հաշվին հող հատկացնելն արգելվում է: Արտելից դուրս յեկողները հող կարող են ստանալ միայն պետական ֆոնդի ազատ հողերից:

3. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4. Համայնացվում են ամբողջ աշխատող անասունը, գյուղատնտեսական ինվենտարը, ամբողջ ապրանքային մթերատու անասունները, բոլոր սերմացվի պաշարներն ու կերի միջոցներն այն չափով, վոր անհրաժեշտ է համայնացված անասունները պահպանելու համար, տնտեսական, շենքերը, վորոնք անհրաժեշտ են արտելային տնտեսություն վարելու համար և վերամշակող

բոլոր ձեռնարկությունները: Արտելի անդամների բնակելի շենքերը չեն համայնացվում:

Գյուղատնտեսական ինվենտարի համայնացման դեպքում, արտելի անդամների անհատական ոգտագործման համար թողնվում են մանր գյուղատնտեսական ինվենտարը, վոր անհրաժեշտ է տներին մոտ գտնվող հողամասում աշխատելու համար:

Համայնացված աշխատող անասուններից արտելի վարչությունն անհրաժեշտության դեպքում առանձնացնում է նվազագույն չափով անհրաժեշտ ձիեր, արտելի անդամների անհատական կարիքները հոգալու համար:

Մեկական կով ունեցող տնտեսություններում կաթնատու անասունները չեն համայնացվում:

Մեկից ավելի կով ունեցող տնտեսություններում մի կովը թողնվում է անհատական ոգտագործման համար, իսկ մյուսները համայնացվում են: Արտադրող անասուններն անպայման համայնացվում են: Համայացված մթերատու անասուններից կազմվում է ապրանքային-արտելային տնտեսություն:

Կատարվում է մանր անասունների, այսինքն՝ խոզերի և վոչխարների համայնացումը զարգացած արդյունաբերության անասնապահության շրջաններում, արտելի անդամների մոտ թողնելով վորոշ քանակությամբ մանր անասուններ արտելի սահմանած չափերով: Վոչ-արդյունաբերական մանր անասնապահության շրջաններում խոզերն ու վոչխարները չեն համայնացվում: Ընտանի թռչունները չեն համայնացվում:

Անհատական տնտեսության թողնված մանր անասուններից և թռչուններից զատ, կոլտնտեսությունները կազմակերպում են համայնական արդյունաբերական մանր անասնապահություն և թռչնաբուծություն։

Անբերրիության դեպքում, որպես ապահովագրություն, արտելին կից ստեղծվում են սերմացվի և կերի անձեռնմխելի ֆոնդեր։

4. ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.

Արտելի վարչությունը և բոլոր անդամները պարտավորվում են.

ա) ընդարձակել ցանքերի տարածությունը, ոգտագործելով արտելի տրամադրության տակ գտնվող ամբողջ հողը, բարելավելով լքված հողերի մշակումը և կատարելով ներտնտեսական հողաշինարարություն.

բ) ամբողջովին ոգտագործել ամբողջ քաշող ուժը, ամբողջ ինվենտարը, բոլոր տրակտորները, բոլոր մեքենաները, սերմացուն և արտադրության մյուս միջոցները, իրենց և փոխառու միջոցներով գնել տրակտորներ և արտադրության այլ միջոցներ, նպատակ ունենալով աստիճանաբար անցնել մեքենայացված տնտեսության.

գ) կազմակերպել համայնացված կենդանի և մեռյալ ինվենտարի ճիշտ ոգտագործումը, այնպես, որ կոլեկտիվ տնտեսության մեջ անասուններն ու ինվենտարը լինեն ավելի բարելավ վիճակում, քան անհատական տնտեսության մեջ.

դ) բարելավել վարելահողերն ու արոտները,

ագրիկուլտուրտեխնիկական ձեռնարկումներ կատարել, որոնք անհրաժեշտ են բերքատվության բարձրացման համար.

ե) կատարել զոոտեխնիկական և տնտնաբուժական ձեռնարկումներ, որոնք անհրաժեշտ են ապրանքային անասնապահության և թռչնաբուծության արագ բարձրացման և բարելավման համար.

զ) զարգացնել գյուղատնտեսական արտադրության մյուս բոլոր ճյուղերը, որոնք հնարավոր են տեղի բնական պայմաններում և տնտեսագործական ճյուղերը շրջանի պայմանների համապատասխան.

է) կազմակերպել տնտեսական համայնական շենքերի և ոժանդակ հիմնարկների շինարարությունը համայնական սկզբունքներով.

ը) բարձրացնել արտելի անդամների կուլտուր-քաղաքական մակարդակը և

թ) բոլոր հնարավոր միջոցներով բարելավել արտելի անդամների, առանձնապես կանանց և յերեխաների կենցաղային պայմանները։

5. ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

6. Արտելի անդամներին ընդունում է վարչությունը, որը նոր ընդունված անդամների ցուցակը ներկայացնում է մոտակա ընդհանուր ժողովի հաստատության։ Արտելից դուրս մշտապես աշխատող բանվորների համար անձնապես ներկայանալը պարտադիր չէ։

7. Արտելի անդամ կարող են դառնալ բո-

լոր այն քաղաքացիները, վորոնք 16 տարեկան հասակ ունեն:

Արտելի մեջ չեն ընդունվում կուլակները և ընտրական իրավունքից զրկված բոլոր անձինք: Այս կետի փոփոխությունը թույլատրվում է այն ընտանիքների անդամների նկատմամբ, վորոնց մեջ կան խորհրդային իշխանության դործին նվիրված կարմիր պարտիզաններ, կարմիր բանակայիններ և կարմիր նավատներ (չարքայիններին և հրամանատարական կազմը), դյուղական ուսուցիչներ և ուսուցչուհիներ, յեթե նրանք յերաշխավորեն իրենց ընտանիքի անդամների համար:

Այն տնտեսությունները, վորոնք կոլտնտեսություն մտնելուց առաջ մորթում կամ վաճառում են իրենց անասունը, վերջ են տալիս ինվենտարին և չարամտորեն ծախծխում են սերմացուն, արտելի մեջ չեն ընդունվում:

6. ԱՐՏԵԼԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

8. Արտել մտնողը պետք է մուծի մուտքի վճար տնտեսության մեջ իրեն բաժին ընկնող թե համայնացված և թե չհամայնացված ամբողջ դույքի արժեքի 2-ից մինչև 10 տոկոսի չափով, բացի անային և անձնական իրերից:

Յեթե արտել մտնողի յեկամտի հիմնական աղբյուրն է աշխատավարձը (տրակտորիստներ, ուսուցիչներ, հողաչինարարներ, արտելի շրջանում գտնվող հիմնարկների և կազմակերպությունների ծառայողներ), մուծումների չափն ամեն անդամ

սահմանում է վարչությունը, սակայն չի կարող դերազանցել տարեկան ռոճիկի 10 տոկոսը:

Բատրակների համար սահմանվում է 5 ռուբլուց վո՛չ ավելի մուտքի վճար:

Այն բանվորները, վորոնք մշտապես զբաղված են կոլտնտեսությունից դուրս այլ աշխատանքով, բացի իրենց դույքի արժեքի 2-10 տոկոսը վորպես մուտքի վճար մուծելուց, ինչպես նախատեսված է կանոնադրությամբ, միանվագ մուծում են նաև իրենց տարեկան աշխատավարձի 3 տոկոսը:

Ծանոթություն.—Բացի մուտքի վճարից, արտելն իր անդամ բանվորից չի պահանջում լրացուցիչ վորևե հատկացում աշխատավարձից:

Վարչությունը կարող է թույլատրել մուտքի վճարը մուծել մաս-մաս միմիայն այն կարգով և ժամկետներին, վորոնք սահմանված են կոլտնտեսության կողմից:

9. Արտելի անդամների հանրայնացված դույքի (լծկան և մթերատու անասուն, ինվենտար, տնտեսական շենքեր և այլն) մի քառորդից մինչև կեսը հատկացվում է արտելի անբաժանելի ֆոնդին, ընդ վորում անբաժանելի կապիտալին ավելի մեծ տոկոսներ են հատկացվում ավելի զորեղ տնտեսություններում: Դույքի մնացած մասը հաշվվում է վորպես արտելի անդամի փայավճար:

10. Արտելի կազմից դուրս յեկող անդամի հետ վարչությունը հաշիվ է տեսնում և վերա-

գարձնում է նրա միայավճարը, ընդ վորում արտելից դուրս յեկողին կարող է հողամաս հատկացվել միմիայն արտելի հողերի սահմաններից դուրս: Հաշվեհարդարը, վորպես կանոն, տեղի յե ունենում տնտեսական տարին վերջանալուց հետո:

11. Տնտեսական տարվա վերջին, արտելի ստացած յեկամուտներով ծածկվում են տնտեսության և նրա հետ կապված այլ ծախսերը, ինչպես նաև անաշխատունակների պահպանման ծախսերը, հատկացումներ են տրվում անբաժանելի և հանրային ֆոնդերին (10-ից մինչև 30 տոկոս անբաժանելի ֆոնդին և 5-ից մինչև 15 տոկոս՝ հանրային այլ ֆոնդերին) և վճարվում է աշխատավարձը:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

12. Արտելի տնտեսության բոլոր աշխատանքները կատարվում են նրա անդամների անձնական աշխատանքով, համաձայն ընդհանուր ժողովի ընդունած ներքին կանոնադրության:

Գյուղատնտեսական աշխատանքների համար թույլատրվում է վարձով հրավիրել այնպիսի մարդիկ, վորոնք ունեն հատուկ գիտելիքներ և պատրաստություն (ագրոնոմներ, ինժեներներ, տեխնիկներ և նմանները):

Ժամանակավոր բանվորներ վարձելը թույլատրվում է միմիայն բացառիկ դեպքերում, յերբ շտապ աշխատանքները չեն կարող կատարվել

պահանջված ժամկետին միայն արտելի անդամների ուժերով՝ նրանց լրիվ բեռնվածության դեպքում, ինչպես և կառուցողական աշխատանքների համար:

13) Արտելում աշխատանքները բաշխում է վարչությունը համաձայն ներքին կանոնադրության: Արտելի անդամներից վոչ վոք չի կարող հրաժարվել նրան հանձնարարված աշխատանքից:

14) Արտելի անդամների աշխատանքը ճիշտ կազմակերպելու նպատակով սահմանվում է աշխատանքի առանձին տեսակների արտադրության և գնահատման, նորմաներ, կատարվում է աշխատանքի քանակի և վորակի հաշվառում, գործադրվում է աշխատանքի դրծարքային վճար և գործավարձի սիստեմ:

15) Արտելի անդամների աշխատանքը վարձատրվում է հետևյալ կարգով՝ տնտեսական տարվա ընթացքում արտելի անդամների պարենային և այլ կարիքների համար ավանսով (նատուրայով կամ փողով) տրվում է վոչ ավելի քան աշխատանքի համար նրան հասնող դումարի 50 տոկոսը: Տնտեսական տարվա վերջին տեսնվում է աշխատանքի վարձատրության վերջնական հաշիվը:

Ծանոթություն.— Արտելի անդամների դրսի աշխատանքից վաստակած դումարներից հատկացումներ են կատարվում արտելի հանրային ֆոնդերին՝ վաստակի 3-10 տոկ. ընդ վորում, այդ սահմաններում հատկացու-

մը սահմանվում է արտելի կամ կոլտնտեսական միության կողմից:

16) Արտելը նյութական ոգնություն է ցույց տալիս անաշխատունակ անդամներին, ինչպես և աշխատունակությունը ժամանակավորապես կորցրածներին: Այդ ոգնության չափը և պայմանները վորոշում է վարչությունը և հաստատում է ընդհանուր ժողովը՝ համաձայն արտելի տնտեսական հնարավորություններին, սակայն վոչ ավելի միջին աշխատավարձից:

8. ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

17) Արտելի բոլոր անդամները պարտավորվում են յենթարկվել կանոնադրության պահանջներին և ընդհանուր ժողովի ու վարչության վորոշումներին, պահպանել ներքին կանոնադրությունը և ճշտիվ կատարել վարչության կողմից նրանց վրա դրված բոլոր աշխատանքները, հասարակական պարտականությունները:

Անտնտեսավար և անփույթ վերաբերմունքը դեպի հանրային ինվենտարը և անասուններն արտելը համարում է մի դավաճանություն կոլեկտիվացման գործին, գործնական ոգնություն թշնամի կուլակին: Դեպի հանրային գույքը ցուցաբերվող այդպիսի անտնտեսավարի և անփույթ վերաբերմունքի համար, առանց հարգելի պատճառների աշխատանքի չգնալու, կարգապահության այլ խախտումների համար վարչությունը մեղավորներին յենթարկում է տույժի համաձայն ներքին կանոնադրության (որինակ՝ հանդիմանություն,

նախազգուշացում, աշխատանքից ժամանակավոր հեռացում, տուգանք և այլն): Անուղղելի անդամների նկատմամբ արտելի վարչությունն ընդհանուր ժողովում հարց է դնում նրանց արտելի կազմից վտարելու մասին:

9. ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

18) Արտելի գործերը կառավարում են անդամների ընդհանուր ժողովը և վարչությունը:

Եթե արտելի անդամների փոքրաթիվ լինելու կամ գյուղերի ցրված լինելուպատճառով ընդհանուր ժողով գումարելը դժվարությունների է հանդիպում, ընդհանուր ժողովը փոխարինվում է լիազորների ժողովով: Լիազորների ժողովի անդամներն ընտրվում են առանձին գյուղերում նույն կոլտնտեսության պատկանող անդամների ժողովի կողմից:

19) Ընդհանուր ժողովը (կամ լիազորների ժողովը) հանդիսանում է արտելի կառավարման բարձրագույն որգանը, լուծում է արտելի գործունեության կարևորագույն հարցերը, ընտրում է վարչություն և վերստուգիչ հանձնաժողով և հաստատում է նրանց աշխատանքին վերաբերյալ հրահանգները:

Ընդհանուր ժողովը (կամ լիազորների ժողովը) որինական է, եթե ներկա են բոլոր անդամների առնվազը կեսը: Ընդհանուր ժողովի (կամ լիազորների ժողովի) վորոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ բաց քվեյով:

20) Արտելի վարչությունն ընտրվում է մի տարի ժամանակով, հանդիսանում է արտելի գործադիր որգանը և վարում է նրա բոլոր գործերը: Վարչությունը բաշխելով իր անդամների մեջ արտելի տնտեսության և արտադրության ղեկավարման պարտականությունները, վարչության համապատասխան անդամների վրա դնում է լիակատար պատասխանատվություն նրանց հանձնարարված գործի համար և տալիս է նրանց անհրաժեշտ իրավունքներ:

Վարչությունը պարտավոր է հաշվետվությունը կատարել կոլտնտեսական սիստեմի սահմանած ձևերով և կանոններով:

21) Վերստուգիչ հանձնաժողովն ստուգում է արտելի գործունեությունը, մասնավորապես կանոնադրության պահպանումը, արտադրական պլանի, պայմանագրերի և պարտականությունների կատարումը պետության առջև, ռեվիզիայի ենթարկում գրամարկղը, դույքը, փաստաթղթերը և հաշվետվությունը, իր եզրակացություններն է տալիս տարեկան հաշվետվությունների մասին, տալիս է իր գործունեության հաշվետվությունն ընդհանուր ժողովին (կամ լիազորների ժողովին):

10. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՀԵՏ

22) Արտելը մտնում է վորպես անդամ... կոլտնտեսական միության մեջ, իր աշխատանքը կատարում է նրա անմիջական ղեկավարությամբ:

Իր արտադրական պլանի հիման վրա արտելը.... կոլտնտեսական միության հետ կնքում է կոնտրակտացիայի պայմանագիր, վորով սահմանվում են արտելի պարտավորությունները՝ իր արտադրությունը կազմակերպելու և ապրանքային ամբողջ արտադրանքը պլանային կարգով պետությանն ու կոոպերացիային հանձնելու մասին, ինչպես և կոլտնտեսական միության և պետական ու կոոպերատիվ այլ՝ որգանների պարտավորությունները՝ արտելին արտադրության միջոցներ և սպառման առարկաներ հայթայթելու վարկային ոգնություն և ագրոտեխնիկական սպասարկում կատարելու ասպարիզում:

ՀԱՎԵԼՎԱԾ

1. ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ 8-ՐԴ ԿԵՏԻ ՓՈԽԱՐԵՆ

ԽՍՀՄ Հողժողկոմատի և Կոլտնտկենտրոնի պարզաբանումը, հաստատված ԽՍՀՄ Կենտգործկոմի ժողկոմխորհի կողմից 1930 թ. ապրիլի 13-ին:

Կոլտնտեսություն մտնելու համար մուտքի վճար սահմանել—բատրակներին 5 ռուբ., չքավորներին ու միջակներին 5-ից մինչև 25 ռուբլի, համաձայն կոլտնտեսություն մտնող տնտեսության կարողության:

2. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԱՆԱՍՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ.

ԽՍՀՄ Հողժողկոմատի և Կոլտնտկենտրոնի պարզաբանումը.

Պարզաբանել, վոր գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրությունը (կետ 4-րդ) չի սահմանափակվում անասունների ձագեր մեծացնելու, վորպես անհատական սեփականություն՝ խոշոր ու մանր յեղջյուրավոր անասուններ և խոզեր բազմացնելու ու դնելու իրավունքը գյուղատնտեսական արտելի անդամների նկատմամբ:

Կոլտնտեսությունների վարչությունները պետք է ամեն կերպ աջակցություն ցույց տան կոլտնտեսականներին պատկանող անասունների հանդեպ ճիշտ խնամք դրծադրելու խնդրում,— արոտավայրեր հատկացնելով, կոլտնտեսականներին հասանելիք յեկամուտի հաշվին կեր բաց թողնելով և այլն:

ԽՍՀՄ Հողագործության Ժողովրդական
Կոմիսարի տեղակալ՝ ԳՐԻՆԿՈ

ԽՍՀՄ Կոլտնտկենտրոնի
նախագահ՝ ԳՈՒՐԿԻՆ

Հաստատում ենք՝

ԽՍՀՄ Կենտր. Գործադիր Կոմիտեի
նախագահ՝ ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի նախագահի տեղակալ՝ ՌՈՒԶՈՒՏԱԿ

Գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրության 14-րդ և 15-րդ կետերի կենսագործման կարգի մասին:

ԽՍՀՄ Հողժողկոմատի և ԽՍՀՄ Կոլտնտկենտրոնի պարզաբանումը:

Հաստատված ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից 1931 թ. մարտի 25-ին:

Գյուղատնտեսական հիմնական աշխատանքները գյուղատնտեսական արտելում կատարվում են գործարքայնության հիմունքներով:

Կոլտնտեսության վարչության կողմից մշակվում են և կոլտնտեսականների ընդհանուր ժողովի միջոցով հաստատվում են արտադրության նորմաները գյուղատնտեսական բոլոր աշխատանքների նկատմամբ և աշխատանքային որվա յուրաքանչյուր աշխատանքի գնահատումները, համաձայն աշխատանքի դժվարության չափի, փորձառության աստիճանի, տվյալ աշխատանքի կատարման համար պահանջվող վորակավորման, աշխատանքի վորակի հաշվառման և կոլտնտեսության համար այդ աշխատանքի ունեցած կարևորության:

Արտելի յեկամտի բաշխումն անդամների մեջ կատարվում է վոչ թե ըստ շնչի, այլ խիստ համապատասխան կոլտնտեսականների աշխատած որերի քանակի (բացառությամբ յեկամտի 5 տոկոսի, վորը բաժանվում է կոլտնտեսականների վրա՝ համաձայն դույքի, վորպիսին նրանք

1007
30726

ՀՍԽՀ — ССРА
ԺՈ. Հ. Մասիսյանի
Ա. ՄԱՍՈՒՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

մուծել են կոլտնտեսության հանրայնացված ֆոնդը)։

Ծանոթություն.—Բազմանդամ ընտանիք ունեցող կոլտնտեսականներին ոգնություն ցույց տալու նպատակով կոլտնտեսության վարչությունը և կոլտնտեսականների ընդհանուր ժողովը կամ ստեղծում են հատուկ ֆոնդ անաշխատունակներին ոժանդակելու համար, կամ թե աշխատանքի բաժանում կատարելիս բազմանդամներին ապահովում են աշխատանքի այնպիսի քանակությամբ, որպիսին նրանց հնարավորություն տա ընտանիքի անաշխատունակ անդամներին ապահովելու անհրաժեշտ մթերքներով։

ՀԱԽՀ—ССРА
Հայ. Ա. Մեհիկյան
Ա. ՍՍԱՄՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0203268

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԴՐԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԱՌԹԻՎ

ՀԱՄ. ԿՈՄ. (բ) ԿՈՒՍ. ԿԵՆՏԿՈՄԻ 1932 թ. ՄԱՅԻՍԻ 10-ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Արգելել շրջանային բոլոր մարմիններին, կոլխոզների վարչության անդամներին յուրաքանչյուր դեպքում առանց յերկրային հողվարչության և կոլխոզմիության հաստատման աշխատանքից հանելը։

2. Հաստատել ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի և Կոլխոզկենտրոնի վորոշումը գյուղատնտեսական արտելի կանոնադրության լրացումները հետևյալ կետերով՝

1. Կոլխոզների վարչություններն ընտրվում են մեկ տարի ժամանակով։

2. Կոլխոզվարչության ժամկետից առաջ վերընտրությունը չի թույլատրվում, բացառություններ թույլատրվում է միայն յուրաքանչյուր առանձին դեպքերում յերկրային կոլխոզմիությունների հաստատմամբ։

3. Բրիգադիրներ նշանակվում են կոլխոզի վարչության կողմից, վոչ պակաս մեկ տարի ժամանակով։

4. Յուրաքանչյուր առանձին դեպքերում բրիգադիրներին ժամկետից առաջ փոխելը թույլատրվում է միայն Շրջկոլխոզմիության և Շրջհողբաժնի հաստատելուց հետո։

2320

30. 461